ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սպիտակի 1

№ 4460-Ա « 31 » հոկտեմբերի 2025թ.

ԴԻՄՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որոշմամբ լուծվող հարցի նկարագրությունը.

Երևանի քաղաքապետարան հասցեագրված Գուլնարա Գաբրիելյանի լիազորված անձ՝ Կարեն Գաբրիելյանի 2025 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ Դ-108255-25 դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի դրույթների համաձայն իրականացվել է վարչարարություն:

2025 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ Դ-108255-25 դիմումով ներկայացված՝ պահանջի քննության կապակցությամբ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին հրավիրված լսումներին ներկայացել և մասնակցել է Գուլնարա Գաբրիելյանի լիազորված անձ՝ Կարեն Գաբրիելյանը:

Ուսումնասիրելով Գուլնարա Գաբրիելյանի լիազորված անձ՝ Կարեն Գաբրիելյանի 2025 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ Դ-108255-25 դիմումը, գնահատելով նշված դիմումին կից ներկայացված ապացույցները, վարչարարության շրջանակներում իրականացված լսումների վերաբերյալ 2025 թվականի հոկտեմբերի 22-ի արձանագրությունը, ինչպես նաև գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքները, պարզվել է հետևյալը.

2. Որոշումն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

2025 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ Դ-108255-25 դիմումով և լսումների ընթացքում ներկայացված դիրքորոշմամբ՝ Գուլնարա Գաբրիելյանի լիազորված անձ՝ Կարեն Գաբրիելյանը, հիմք ընդունելով «Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ «GM 03.№56» գրությունը, «Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի օգոստոսի 19-ին տրված թիվ 25-3091 հետքաբանական եզրակացությունը, «Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի օգոստոսի 26-ին տրված թիվ 25-3267 ապրանքագիտական եզրակացությունը, խնդրել է վերանայել Երևանի քաղաքապետի 2025 թվականի օգոստոսի 27-ի N 3426-Ա որոշումը և փոխհատուցել 2025 թվականի հուլիսի 12-ին Երևան քաղաքի Խորենացու փողոցի թիվ 20 շենքի բակային տարածքում ծառի ճյուղը Գուլնարա Գաբրիելյանի սեփականությունը հանդիսացող «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ընկնելու արդյունքում առաջացած վնասը, որը կազմում է 859,000 (ութ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ:

2016 թվականի հուլիսի 30-ին տրված՝ տրանսպորտային միջոցի հաշվառման թիվ HB957638 վկայագրի համաձայն՝ «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենան հանդիսանում է Գուլնարա Գաբրիելյանի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնի պետին ուղղված՝ 2025 թվականի հուլիսի 15-ի զեկուցագրի համաձայն՝ 2025 թվականի հուլիսի 12-ին ստացված հաղորդման կապակցությամբ (գրանցվել է գրանցամատյանի 6566-րդ համարի ներքո) այց է կատրվել Խորենացու փողոցի թիվ 20 հասցե, որտեղ շենքի բնակիչները բանավոր հայտարարել են, որ բակում գտնվող հաստաբուն ծառը քամու հետևանքով ընկել է բակում կայնված «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի և մեկ այլ ավտոմեքենայի վրա:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի 2025 թվականի հուլիսի 21-ի թիվ Դ-76134-25 գրության համաձայն՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից տեղեկացվել է, որ 2025 թվականի հուլիսի 12-ին Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Խորենացու փողոցի թիվ 20 հասցեում կենսունակ արևելյան սոսու հաստաբուն կենսունակ ճյուղը կոտրվել և ընկել է Գուլնարա Գաբրիելյանին պատկանող «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա:

«Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետի կողմից 2025 թվականի օգոստոսի 19-ին տրված թիվ 25-3091 հետքաբանական եզրակացության «4. Հետևություններ» բաժնի 1-ին կետի համաձայն՝ փորձաքննության տրամադրված «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա առկա են մեխանիկական բնույթի վնասվածքներ ու հետքեր, որոնք առաջացել են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնի պետ Ե.Նիկոյանի կողմից տրամադրված նյութերում ամրագրված պատահարի հետևանքով, համապատասխան կառուցվածքներ ու արտացցված եզրեր ունեցող կոշտ առարկաների հետ, որպիսիք հանդիսանում են դեպքի վայրի լուսանկարներում պատկերված, կոտրված ծառի ճյուղերը, անմիջական, վերևից ներքև ուղղությամբ հարվածային բնույթի փոխազդեցությունների արդյունքում: Ընդ որում՝ փոխազդեցությունները տեղ են գտել ավտոմեքենան անշարժ վիճակում գտնվելու պայմաններում՝ նշված ծառի ճյուղը չորացած ու քայքայված լինելու պատճառով կոտրվելու և անշարժ վիճակում գտնվող ավտոմեքենայի վրա ընկնելու արդյունքում: Փորձագետը նաև նշել է, որ «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի առջևի թափարգելի աջ անկյունում, առջևի աջ լապտերի, աջ կողմի դռների ու հետևի անվաթևի վրա առկա են մեխանիկական բնույթի վնասվածքներ, որոնք չէին կարող առաջանալ տվյալ պատահարի արդյունքում:

«Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի օգոստոսի 26-ին տրված թիվ 25-3267 ապրանքագիտական եզրակացության «4. Հետևություններ» բաժնի 1-ին կետի համաձայն՝ փորձաքննությանը տրամադրված «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի սեփականատիրոջը պատճառված նյութական վնասի չափը կազմում է 859.000 (ութ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ:

Երևանի քաղաքապետի 2025 թվականի օգոստոսի 27-ի N 3426-Ա որոշմամբ Գուլնարա Գաբրիելյանի լիազորված անձ՝ Կարեն Գաբրիելյանի՝ վնասը փոխհատուցելու մասին 2025

թվականի հուլիսի 29-ի թիվ Դ-81568-25 դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ «Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի օգոստոսի 26-ի թիվ 25-3267 ապրանքագիտական եզրակացության գնահատման արդյունքում փաստվել է, որ թիվ 25-3267 ապրանքագիտական եզրակացությամբ հողում կատարված չէ ծառի ճյուղն ընկնելու հետևանք հանդիսացող հետքերի առաջացման պատճառները գնահատող 2025 թվականի օգոստոսի 19-ին տրված թիվ 25-3091 կամ որևէ այլ հետքաբանական փորձագիտական եզրակացությանը, ինչով պայմանավորված՝ կատարվել է հետևություն այն մասին, որ 2025 թվականի օգոստոսի 26-ի թիվ 25-3267 ապրանքագիտական եզրակացությամբ ապացուցված չի համարվել «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառի ճյուղ ընկնելու արդյունքում առաջացած հետևանքների և 859.000 (ութ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամի չափով գնահատված վնասի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

«Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ «GM 03.№56» գրությամբ պարզաբանվել է, որ Երևան քաղաքի Մովսես Խորենացու փողոցի թիվ 20 հասցեում «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառ ընկնելու պատահարի կապակցությամբ իրականացվել է հետքաբանական փորձաքննություն և տրվել է 2025 թվականի օգոստոսի 19-ի թիվ 25-3091 եզրակացությունը «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա առկա վնասվածքների բնույթի, տեղակայումների, առաջացման մեխանիզմի ու նշված պատահարի հետ պատճառական կապի վերաբերյալ և իրականացվել է ապրանքագիտական փորձաքննություն ու տրվել է 2025 թվականի օգոստոսի 26-ի թիվ 25-3267 եզրակացությունը «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վնասի չափի վերաբերյալ: 2025 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ «GM 03.№56» գրությամբ նաև նշվել է, որ ապրանքագիտական եզրակացությունը տրվել է կատարված հետքաբանական փորձաքննության արդյունքների հիման վրա և վնասի չափի հաշվարկներում ներառվել են բացառապես հետքաբանական փորձաքննությամբ տվյալ պատահարի արդյունքում առաջացած վնասները:

«Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված՝ թիվ ԱՓ/64-25 պայմանագրի համաձայն՝ «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա առկա վնասվածքների առաջացման մեխանիզմի վերաբերյալ հետքաբանական փորձաքննություն իրականացնելու ծառայության դիմաց Կարեն Գաբրիելյանի կողմից 2025 թվականի օգոստոսի 21-ին վճարվել է 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ (հիմք՝ վճարման հանձնարարականի թիվ 000036 անդորրագիր):

«Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված՝ թիվ ԱՓ/66-25 պայմանագրի համաձայն՝ «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենային պատճառված վնասի չափի գնահատման փորձաքննություն իրականացնելու ծառայության դիմաց 2025 թվականի օգոստոսի 26-ին վճարվել է 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ (հիմք՝ թիվ 9884226 անդորրագիր):

3. Որոշումն ընդունելու հիմնավորումները.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույք են համարվում հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը, այսինքն՝ այն օբյեկտները, որոնք

անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակության փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործման անհնարինության:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝ գույք՝ անշարժ գույք՝ հողամասերը, անշարժ գույք հանդիսացող ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա, այդ թվում նաև՝ կառուցվող շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1071.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի օգտագործման, տիրապետման, տնօրինման, շահագործման կամ կառուցապատման ընթացքում այլ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պատասխանատվությունը կրում է անշարժ գույքի սեփականատերը, եթե չի ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 6367-2020 գրությամբ տրված պարզաբանման համաձայն՝ օրենքի իմաստով ծառը (անկախ դրա տեսակից) հանդիսանում է, որպես անշարժ գույք, դիտվում է որպես հողամասի պատկանելիք, հետևաբար չի կարող առանձին գրանցվել և սեփականության իրավունքով պատկանում է հողամասի սեփականատիրոջը (քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մաս):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա/ անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

բ/ վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

2025 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ Դ-108255-25 դիմումին կից ներկայացված՝ «Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ «GM 03.№56» գրության հետազոտմամբ բացահայտվում է միևնույն ընկերության կողմից 2025 թվականի օգոստոսի 19-ին տրված թիվ 25-3091 հետքաբանական եզրակացության և 2025 թվականի օգոստոսի 26-ին տրված թիվ 25-3267 ապրանքագիտական եզրակացության միջև փոխկապվածությունը, ինչը հիմք է հանդիսանում «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառի ճյուղ ընկնելու հետևանքով առաջացած վնասը 859.000 (ութ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ կազմելու և փոխհատուցման ենթակա լինելու հանգամանքն ապացուցված համարելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնում թիվ 6566 հաղորդման կապացությամբ կազմված նյութերը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի 2025 թվականի հուլիսի 21-ի թիվ Դ-76134-25 գրությունը, «Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի օգոստոսի 19-ի թիվ 25-3091 հետքաբանական եզրակացությունը և 2025 թվականի օգոստոսի 26-ի թիվ 25-3267 ապրանքագիտական եզրակացությունը, ինչպես նաև «Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ «GM 03.№56» գրությունը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով, 1058-րդ հոդվածի 1-ին մասով և 1071.1 հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Գուլնարա Գաբրիելյանի լիազորված անձ Կարեն Գաբրիելյանի՝ վնասը փոխհատուցելու մասին 2025 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ Դ-108255-25 դիմումը բավարարել:

2. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետին՝ «Ջի Էմ փորձագիտական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետի 2025 թվականի օգոստոսի 26-ի թիվ 25-3267 ապրանքագիտական եզրակացության համաձայն՝ «Honda Fit 1.3» մակնիշի «35 CP 159» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վրա ծառի ճյուղ ընկնելու արդյունքում առաջացած վնասվածքների հետևանքով սեփականատիրոջը պատճառված նյութական վնասի չափը կազմող 859,000 (ութ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամը, ինչպես նաև 80,000 (ութսուն հազար) ՀՀ դրամը, որպես խախտված իրավունքի վերականգնման նպատակով կատարված ծախս, փոխհատուցել Գուլնարա Գաբրիելյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ստանալու հաջորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ